

---

---

**«ԲԻՈԼԱԲ ԿԱ/ՊՏ» ԿՄԱԽՔԱՅԻՆ ԿԵՆՍԱՔԱՆԱԿԱՆ ՊՐՈԹԵԶՈՎ  
ԱՌՐՏԱԼ ԿԼԱՊԱՆԻ ՊՐՈԹԵԶԱՎՈՐԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 60  
ՏԱՐԵԿԱՆԻՑ ԲԱՐՁՐ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ՄՈՏ**

**Ժելեզնով Ս.Ի., Իսայան Մ.Վ., Աստապով Դ.Ա., Սիսակյան Վ.Գ.,  
Հարությունյան Գ.Գ.**

Նովոսիբիրսկի ակադեմիկ Ե.Ն. Մեշալկինի անվ. արյան շրջանառության պաթոլոգիայի գիտահետազոտական ինստիտուտ, Նովոսիբիրսկ, Ռուսաստան  
Երևանի Պետական բժշկական համալսարանի թիվ 1 կլինիկական համալիր, Լևոն և Կլավդիա Նազարյանների ռադիոլոգիայի ամբիոն, Երևան, Հայաստան

---

Կլինիկական պրակտիկայում սրտի փականների կենսաբանական պրոթեզների ներդրումը նոր հնարավորություն տվեց սրտի փականների ծանր արատներ ունեցող հիվանդների բուժման հեռանկարի գործում: Աորտալ փականների արատներ ունեցող հիվանդների 10-23%-ը կազմում են սրտի մեկուսացված աորտալ արատներ ունեցող հիվանդները, որոնց տարիքը (մոտ 50%) կազմում է 60 տարեկան: Հաշվի առնելով «ԲԻՈԼԱԲ ԿԱ/ՊՏ» կենսաբանական պրոթեզների ցածր թրոմբազոյացման նախատրամադրվածությանը, ֆիզիոլոգիական մոտարյունային հոսքի ապահովումը, հակակոագուլյանտների նվազագույն դեղաչափերի օգտագործման հնարավորությունը, կենսաբանական պրոթեզներն ավելի նպատակահարմար է դարձնում օգտագործել տարեց և ծերունական հասակի հիվանդների շրջանում: 2009 թ հունվարից մինչև 2010թ. մայիս ընկած ժամանակահատվածում, կենսաբանական պրոթեզների կիրառումով, կատարվել է 92 վիրահատություն: Անմիջական կլինիկական հետազոտությունները ցույց են տվել, որ կենսաբանական պրոթեզներն ապահովվում են ներսրտային հեմոդինամիկային համապատասխան վերականգնում, որոնք էլ բերում են սրտի պարամետրական և ֆունկցիոնալ ցուցանիշների վերականգնմանը:

Կլինիկական պրակտիկայում «ԲԻՈԼԱԲ ԿԱ/ՊՏ» կենսաբանական պրոթեզների ներդրման արդյունքները ցույց տվեցին, որ այդ պրոթեզները ապահովվում են մինիմալ մահացություն և թրոմբազոյացումով պայմանավորված բարդություններ: